ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113739184 որոշումն անփոփոխ թողնելու, իսկ թիվ 2113739183 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<24>>12 2021թ. 7-13- 19439 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Խաչատուր Տոնոյանի ՄԴ/100955-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 2 փողոցի 40/1 տան բնակիչ Խաչատուր Տոնոյանը դիմումով հայտնել է, որ նույն իրավախախտման համար ստացել է երկու տարբեր՝ 2113739183 և 2113739184 որոշումները, խնդրել է վերանայել դրանք:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է մասնակի բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113739183 որոշման հիմքում դրված տեսանյութը համադրելով թիվ 2113739184 որոշման հիմքում դրված տեսանյութի հետ պարզվում է, որ <<BMW>> մակնիշի 32SU900 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը կատարում է նույն իրավախախտումը:

Այսպիսով, ակնհայտ է, որ նույն իրավախախտման համար կայացվել է երկու որոշում, ուստի դիմումատուի անվամբ կայացված թիվ 2113739183 որոշումը ենթակա է բեկանման:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.11.2021թ. թիվ 2113739184 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.11.2021թ. թիվ 2113739183 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Խաչատուր Տոնոյանին:

Կատարող՝ Ա.Եղիազարյան
Հեռ. 011-544-978

Ե.Կարապետյան